ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2021/51

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2 հունիսի 2021 թ. N 51

# ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին**

Հաստատության լրիվ անվանումը՝ «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն 96

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021թ. հունիսի 2-ի նիստում քննարկեց Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ԿՏՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

**Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.**

| | |
|---|---|
| **դիմում-հայտի ներկայացում** | 10 հոկտեմբերի 2020 |
| **ինքնավերլուծության ներկայացում** | 30 հոկտեմբերի 2020 |
| **առցանց փորձագիտական այցի իրականացում** | 24-27 նոյեմբերի 2020 |
| **փորձագիտական զեկույցի ներկայացում** | 4 փետրվարի 2021 |
| **թերությունների վերացման ծրագրի ներկայացում** | 16 փետրվարի 2021 |

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների

խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 5-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Կոտայքի տարածաշրջանային պետական պետական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ առկա են:**

Քոլեջի ՄԿԾ-ները կազմված են ՈԱԾ-ին համապատասխան և ընդհանուր առմամբ հիմնված են պետական կրթական չափորոշիչներով /ՊԿՉ/ նախատեսված վերջնարդյունքների վրա: Կրթական ծրագրերը կազմելիս, կամ նոր ծրագրեր ներդնելիս հաշվի են առնվում տարածաշրջանային աշխատաշուկայի պահանջները: Սահմանափակ է համեմատական վերլուծությունների (բենչմարքիգնի) փորձը: Գործատուների հետ որոշակի համագործակցություն կա՝ հիմնականում պրակտիկաների կազմակերպման ուղղությամբ, սակայն ՄԿԾ-ների մշակման, իրականացման և բարելավման գործընթացներում գործատուների ներգրավվածությունը բավարար չէ:
Դասախոսական կազմը համալրված է ինչպես տարիների դասավանդման փորձառությամբ, այնպես էլ գործնական փորձառությամբ երիտասարդ դասավանդողներով, ովքեր հիմնականում ապահովում են ՄԿԾ-ներով պահանջվող վերջնարդյունքները: Հիմնական խնդիրները դասախոսական կազմի վերապատրաստման և կատարելագործման մեխանիզմների տիրույթում են:
Քոլեջը բավական հագեցրել է սեփական ռեսուրսները, միաժամանակ որոշ կրթական ծրագրերի ուղղությամբ, հաջողությամբ կիրառվում են գործատուների ռեսուրսները: Դեռևս թերի են ռեսուրսների կարիքների վերհանման և ըստ ռազմավարության պլանավոման մեխանիզմները:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Քոլեջն ունի ռազմավարական ծրագիր, որում առկա են նպատակներ և խնդիրներ, այնուամենայնիվ այն դեռևս երկարաժամկետ նպատակների իրագործման գործիքի չի վերածվել: Մշակված ռազմավարական ծրագիրը չունի պլան-ժամանակացույց, առկա չեն կոնկրետ քայլերի հաջորդականություն, որը կհանգեցներ նախանշված խնդրի իրականացմանը, չկան խնդրի իրականացման համար կոնկրետ պատասխանատուներ, ժամանակահատված և ցուցիչներ: Այսինքն այդ ծրագրերը գործունեության մեջ ներդրված չեն: Առկա չէ ռազմավարական կառավարման մեխանիզմ:
Ստորաբաժանումների աշխատանքային պլանները բխում են կանոնակարգերի հիմնական գործառույթներից, սակայն չեն կապակցվում ռազմավարական ծրագրի հետ, ուստի և չեն երաշխավորում

ռազմավարական ծրագրի իրականացումը: Ղեկավար կազմն իր գործունեությամբ կենտրոնացած է քոլեջի առօրյա գործընթացների, այլ ոչ թե ծառացած խնդիրների և դրանց լուծման վրա:
Բացակայում են ռազմավարության և իրականացվող այլ գործընթացների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
Որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է և էական ազդեցություն չունի քոլեջի կառավարման արդյունավետության, կրթական ծրագրերի և այլ ոլորտների արդյունավետության բարձրացման և զարգացման վրա: Հավաքագրվող տվյալները միտված չեն խնդիրների դուրսբերմանը և բարելավման ուղիների որոնմանը:

Թույլ է արտահայտված ներքին և արտաքին շահակիցների (մասնավորաբար՝ գործատուների) ներգրավվածությունը գործընթացներում:
Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

***3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

Քոլեջում հետազոտությունները հիմնականում սահմանափակվում են որոշ դասախոսների անձնական նախաձեռնություններով, համակարգված մոտեցումներ դեռևս առկա չեն հետազոտությունների և զարգացման, ինչպես նաև հետազոտություն-ուսումնառություն կապի ապահովման առումով: Միջազգայնացման ուղղությամբ նույնպես նախաձեռնությունները սահմանափակ են և դեռևս ոչ համակարգված, առանցքային ազդեցություն չունեն քոլեջի գործունեության զարգացման վրա: Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունն առայժմ չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ներկայացված ծրագրով քոլեջը, հաշվի առնելով փորձագիտական խմբի ներկայացրած խորհրդատվությունները, բացահայտված հիմնախնդիրների լուծման նպատակով հանձնառել է բարեփոխել իր գործունեության ոլորտների մեծ մասը, սակայն ոչ բոլոր խորհրդատվություններն են ընդգրկված բարելավման ծրագրում և կան խորհրդատվություններ, որոնք ճիշտ չեն ընկալվել հաստատության կողմից:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

**ՈՐՈՇԵՑ**

1. **«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

- կառավարման համակարգի զարգացման անհրաժեշտությունը, որը հնարավոր կդարձնի քոլեջի ռազմավարական կարևոր նախաձեռնությունների իրագործումը,
- ՌԾ նպատակների իրականացման համար հստակ ժամանակացույց և արդյունքների ձեռքբերման գնահատման չափելի առանցքային ցուցիչներ ունենալու պահանջը,
- հետազոտության ոլորտում քոլեջի հետաքրքրությունների ու ուղղությունների հստակեցման անհրաժեշտությունը, դրանք փոխկապակցելով ուսումնական ծրագրերի և դրանց բարեփոխման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջների հետ:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.
   - գործատուների հետ համագործակցության շրջանակների ընդլայնմանը,
   - դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացմանը,
   - ներքին և արտաքին հաշվետվողականության հստակ համակարգերի ներդնմանը,
   - քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառոմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

**Հավատարմագրման Հանձնաժողովի**
**նախագահ**
2021 թ. հունիսի 2
ք.Երևան

**Ա. Սաղյան**